Հավելված N 1

ՀՀ կառավարության 2010 թվականի
հոկտեմբերի 21-ի N 1361 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱԴԱՍ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է հարկային և մաքսային մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների, անգործության կամ հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված ակտերի վերաբերյալ վերադաս հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների (այսուհետ՝ հանձնաժողովներ) ընդունած առանձին որոշումների՝ գանգատարկման խորհրդում (այսուհետ՝ խորհուրդ) քննարկման կարգը:

2. Խորհրդի հիմնական խնդիրը հարկային և մաքսային օրենսդրության կամ հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի դրույթների միատեսակ և ճիշտ կիրառմանը նպաստելն է:

3. Խորհրդի գործառույթներն են՝

1) հանձնաժողովներ ներկայացված դիմում-գանգատների և դրանց վերաբերյալ հանձնաժողովների որոշումների քննարկումն ու եզրակացությունների ընդունումը.

2) հարկային և մաքսային օրենսդրության, ինչպես նաև հարկային և մաքսային օրենսդրությունը կարգավորող այլ իրավական ակտերի դրույթների կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

4. Տնտեսավարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) հանձնաժողովներ ներկայացված

դիմում-գանգատները քննության են առնվում կոմիտե մուտքագրվելու օրվանից 15-օրյա ժամկետում, և դիմում-գանգատները, բացառությամբ վարչական տուգանքի նշանակման հետ կապված դիմում-գանգատների, մասամբ բավարարելու կամ դրանք մերժելու դեպքերում հանձնաժողովներն իրենց որոշումների նախագծերը, դիմում-գանգատը և գանգատին առնչվող նյութերը (այսուհետ՝ գանգատի փաթեթ) մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում են խորհրդին՝ նիստերի անցկացման վայրի հասցեով:

5. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով՝ ազատ քննարկման և հրապարակայնության պայմաններում: Խորհրդի նիստերն անցկացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության վարչական շենքում:

6. Խորհրդի անդամները խորհրդի նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ գրավոր (էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) ծանուցվում են խորհրդի հերթական նիստի անցկացման ժամկետների, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ: Խորհրդի անդամներին ծանուցագրի հետ միասին էլեկտրոնային կարգով ուղարկվում են նաև օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող փաստաթղթերի լուսապատճենները:

7. Խորհրդի աշխատանքը ղեկավարում է խորհրդի նախագահը: Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում է խորհրդի նիստերը և վարում դրանք.

2) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

3) ստորագրում է խորհրդի ընդունած եզրակացությունները.

4) խորհրդի անդամների միջնորդության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ խորհրդում կոմիտեի ներկայացուցիչներից պահանջում է գանգատին առնչվող լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր.

5) պատասխանատվություն է կրում խորհրդի խնդիրների ու գործառույթների իրակա-նացման համար:

8. Խորհրդի նախագահի բացակայության ժամանակ, նրա հանձնարարությամբ, խորհրդի նախագահի պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից որևէ մեկը:

9. Խորհրդի աշխատանքների կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմն ապահովում է խորհրդի քարտուղար, որը հանձնաժողովի անդամ չէ: Խորհրդի քարտուղարը՝

1) նախապատրաստում է խորհրդի նիստի օրակարգը.

2) իրականացնում է խորհրդի ընթացիկ կազմակերպման տեխնիկական աշխատանքները.

3) քննարկման է ներկայացնում խորհրդի գործունեությանը վերաբերող ընթացիկ հարցերը.

4) արձանագրում է խորհրդի նիստերի ընթացքը, կազմում և խորհրդի անդամների համաձայնեցմանն է ներկայացնում խորհրդի եզրակացությունների նախագծերը.

5) կազմում է գանգատի գործը, վարում խորհրդի գործերի հաշվառման և ընդունված եզրակացությունների գրանցամատյանները.

6) կազմում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացվող եռամսյակային հաշվետվության նախագիծը:

10. Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի եզրակացությունն ըստ գանգատում բերված յուրաքանչյուր պահանջի ընդունվում է, եթե դրա օգտին քվեարկել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելին: Հավասար ձայների առկայության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ չէ, և եզրակացությունը համարվում է ընդունված՝ գանգատ ներկայացրած անձի օգտին:

11. Խորհրդի կողմից յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացվում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

12. Խորհուրդն իր նիստերի ընթացքում քննարկում է հանձնաժողովի ներկայացրած յուրաքանչյուր գանգատի փաթեթը և խորհրդի նիստերի անցկացման վայրում դրա մուտքագրվելուն հաջորդող տասն օրվա ընթացքում իր եզրակացությունը ներկայացնում կոմիտե:

13. Կոմիտեի հանձնաժողովները, հաշվի առնելով խորհրդի ընդունած եզրակացությունը, երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում են դիմում-գանգատի վերաբերյալ որոշում, որի բնօրինակը մեկ օրվա ընթացքում տրամադրվում է տնտեսավարող սուբյեկտին, իսկ կրկնօրինակը՝ խորհրդին:

14. Խորհրդի ընդունած եզրակացության վերաբերյալ առարկությունների առկայության դեպքում կոմիտեի նախագահը սահմանված կարգով երկարաձգում է որոշումների ընդունման համար սահմանված ժամկետները՝ գանգատի փաթեթը խորհրդի եզրակացության, կոմիտեի առաջարկությունների և հիմնավորումների հետ միասին ներկայացնելով Հայաստանի Հանրապետության վարչապետին:

15. Սույն կարգի 14-րդ կետում նշված դեպքերում գանգատի փաթեթը քննարկվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ, և հանձնաժողովները, քննարկման արդյունքներին համապատասխան, դիմում-գանգատի վերաբերյալ ընդունում են որոշում, որի բնօրինակը մեկ օրվա ընթացքում տրամադրվում է տնտեսավարող սուբյեկտին, իսկ կրկնօրինակը՝ խորհրդին:

16. Կոմիտեի հանձնաժողովների որոշումները դրանց ընդունմանը հաջորդող տասն օրվա ընթացքում հրապարակվում են կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
հոկտեմբերի 21-ի N 1361 - Ն որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ս. Կարայան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ)
Գ. Մալխասյան	- ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ալավերդյան	- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Տ. Բարսեղյան	- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Մ. Թումասյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Հունանյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական վարչության պետ
Վ. Միրումյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատա-կազմի պետական եկամուտների քաղաքակա-նության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
Ա. Մնացականյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատա-կազմի իրավաբանական վարչության պետ
Հ. Թորոսյան	- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտեի հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչության հարկային հսկողության համակարգման և կազմա-կերպման բաժնի պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1361